

ոտք իբր կանգունի երկայնութիւն: Միջինն է 4.88 ոտք որ Հասփէտական ոտնաչափի երկայնութեան իրիստ մօտ է:

39. — Այս տարածութիւնները աւելի դժուար են, երբ չենք գիտեր թէ հեղինակը ի՞նչպէս առած է իր չափերը, լարով թէ քայլով: Բայց եթէ պատէն դուրս առնենք, ինչպէս ցոյց կուտայ Արգոլիմի ստուերադիրը, որուն մնացորդները կը գտնուին Dr. Schick ի մօտ, շրջապատին երկայնութիւնը պիտի ըլլայ 490 ոտք, որ կանգունի (dexter) երկայնութիւնը կուտայ իբր 4.58 ոտք: Նաև, եթէ մենք ընդունինք որ նախկին գմբէթին լայնութիւնը կը համապատասխանէ սիներու այժմու շրջանակի արտաքինին՝ շրջափակի երկայնութիւնը պիտի ըլլայ 252 ոտք, մէկ կանգունը կուտայ 4.66 ոտք:

40. — Ուստի հեռաւորութիւնը Գերեզմանէն մինչև Գողգոթայի կեդրոնը 132 ոտք է, որ 28 ի բաժնելով մէկ կանգունը կուտայ 4.71 ոտք, և Գողգոթայէն Ս. Հեղինէի մտարան հեռաւորութիւնն է 92 ոտք, որ 19 ի բաժնելով մէկ կանգունը կուտայ 4.84 ոտք:

41. — Կոստանդինոսի եկեղեցիներուն զբաւած տարածութեան երկայնութիւնը կը շարունակուի Ս. Գերեզմանի եկեղեցիին արեւմուտքէն մինչև սիներու մնացորդները, իսկ էլ Զէյք կոչուած վաղոցին արեւմուտքը 472 ոտք է: Ասիկա բաժնելով 96 ի կը ստանանք 4.է8 իբր կանգունի երկայնութիւն: Տարածութեան լայնութիւնը կը զանազանի, բայց կարելի է հաշուել իբր 150 ոտք որ կը ստացուի մէկ կանգունը իբր 5 ոտք:

37-37 հատուածին դառնանք: Հեղինակը Ս. Կուսի անունով չորս եկեղեցիներ կը յիշատակէ. Պրոպատիկէ Աւազանին եկեղեցին, Ս. Կուսի գերեզմանի եկեղեցին, Զիթենեաց լերան վրայ Ս. Կուսի եկեղեցին և Յուստինիանոս կայսրէն շինուած նոր եկեղեցին: Այն եկեղեցին որ երկրաշարժէն վնասուած էր, հաւանաբար վերջին երկուքներէն մին է: Անոր մասին արուած տարածութիւնները հասկնալ զբուար է: Եկեղեցին ստուգելու շատ ընդարձակ էր. աւելի լայն քան Բեթլեհէմի եկեղեցին:

38. — Սրոնի եկեղեցիին տարածու-


թիւնները ընդհակառակն շատ պարզ են: Ան ունի 39 կանգուն երկայնութիւն կամ գրեթէ 180 ոտք, և 26 կանգուն լայնութիւն կամ գրեթէ 126 ոտք:

Ամբողջութեան նայելով Commemitoriumը շատ հետաքրքրական յիշատակարան մըն է և արժանի խնամոտ ուսումնասիրութեան:

Այս յիշատակարանը կը կոչուի Commemitorium de Casis Dei Vel Monasteriis զոր զնդապետ Sir Watson լուստարանութեամբ հրատարակած է Palestine Exploration Fund Հանդէսի մէջ (1913, էջ 23-33) ինչպէս կը տեսնուի վերև: Մեր սէշյակահան Հին Վանքեր և Եկեղեցիներ Ս. Երկրին մէջ» գիրքը (տպ. Երուսաղէմ, 1931) կը պարունակէ ինչ ինչ մէջբերումներ նոյն կարևոր յիշատակարանի լատիներէն թարգմանութենէն. այս անգամ անզոյ. թարգմանութիւնը ի ձեռքն ունենալով ուրախութեամբ հայերէնի թարգմանեցինք զայն հանդերձ լուստարանութիւններով, ի պէտս Պատմութեան Ս. Տեղեաց և Վանօրէից:

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱՆՈՒՆԻ

ՎԵՐՁ



ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՈՍԳ

Երջանկութիւնը զնդակ մըն է, որուն ետևէն կը վազկեմ որչափ ասէն որ կը քաւայի այն, ևւ ետ կանգ կ'առնէ՝ մեր ոտքով կը մըղնեմ զայն:

*

Այն որ կ'ուզէ աղօթել, պարտի վճարել մեքեն չար խորհուրդները, ասէն երկրաւոր ցանկութիւն, քարձացնել սիրտը դիպի երկինք, մոռնալ նախասինքները ևւ ներել իր բշխամեկերուն:

*

Աղօթքը վեր կը քարձացնէ մեզ տեսնելի իրերէն, կը հանդարտեցնէ մեր ոխն ու փեղը, կը սփոյթէ մեր վիշտերը, ևւ աւելի զօրաւոր կը դարձնէ մեզ փորձակներու դիմ:

*

Աղօթքը առաջինութիւն մը չէ սուրապիս, բայց սկիզբն է բոլոր առաջինութեանց: Աղօթել ևւ ըստ աղօթելի է պարտաւ ըլլալ ըստ ապրելու: